ԼԳԲՏ ԱՆՁԱՆԾ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Տարեկան զեկույց
Հայաստան, 2018թ.

Տարեկան զեկույց. ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների
իրավիճակը Հայաստանում, 2018թ.

Կազմվել է «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի (Փինք Արմենիա)
կողմից՝ ԻԼԳԱ-Եվրոպայի աջակցությամբ (մայիս, 2019թ.)

Ներածություն

Փինք Արմենիան յուրաքանչյուր տարի ներկայացնում է Հայաստանում ԼԳԲՏ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր)[1] անձանց մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ տարեկան զեկույց՝ արձանագրված դեպքերի փաստերի ներկայացման և իրավական վերլուծության հիման վրա:

Զեկույցում նաև ներառվել են զանգվածային լրատվության միջոցներում տեղ գտած հրապարակումները, ինչպես նաև սոցիալական ցանցերում պետական մարմինների ներկայացուցիչների, պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքը:

Սույն զեկույցում քննարկվել են պետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը, առաջընթացն ու թերացումները, ինչի արդյունքում ներկայացվել են առաջարկներ:

Թավշյա հեղափոխությամբ 2018թ. Հայաստանում ստեղծվել է մի նոր իրավիճակ, որտեղ զանգվածային լրատվության միջոցներում և սոցիալական ցանցերում անձանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքը հասել է աննախադեպ մակարդակի, ինչը նախ և առաջ պայմանավորված է եղել քաղաքական դաշտում նախկին իշխանությունների կողմից ակտիվորեն իրականացվող շահարկումներով:

2018թ.-ը նաև աննախադեպ էր ատելության հիմքով հանցագործությունների ծավալով: Մասնավորապես, Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղում տեղի ունեցավ հարձակում երիտասարդների վրա, որոնց թվում էին նաև ԼԳԲՏ ակտիվիստներ: Իրավախախտների թվում էին ինչպես չափահաս անձինք, այնպես էլ երեխաներ՝ տարբեր տարիքի, ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք՝ մանկահասակ երեխաների հետ: Բռնարարներին սատարեց ամբողջ գյուղը: Դեպքին հաջորդեց ատելության խոսքի լայն ալիք ինչպես սոցիալական ցանցերում, այնպես էլ զանգվածային լրատվության միջոցներում:

2018թ.-ի ընթացքում Փինք Արմենիան արձանագրել է սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով պայմանավորված խտրականությամբ զուգորդված իրավախախտումների 25 դեպք: Դրանցից 10-ի դեպքում տուժողը չի ցանկացել գործին որևէ իրավական ընթացք տալ: Տուժողների նման տրամադրվածությունը պայմանավորված է եղել հետևյալ երկու հանգամանքով. մի մասը մտավախություն են ունեցել, որ իրենց սեռական կողմնորոշման մասին տեղեկությունը կարող է տարածվել ավելի լայն շրջանակի անձանց շրջանում, մյուս մասը տուժել են ընտանեկան բռնությունից և չեն ցանկացել հաղորդում ներկայացնել իրենց ընտանիքի անդամների դեմ:

Դեպքերից 12-ով ներկայացվել է հաղորդում հանցագործության մասին: Դրանցից 6-ով հարուցվել է քրեական գործ, մյուս 6-ով՝ ոչ: Ընթացք չստացած գործերից 4-ի դեպքում տուժողները հետ են վերցրել բողոքը կամ իրավակիրառ մարմինների նկատմամբ անվստահության կամ անձնական այլ դրդապատճառներով: Հարուցված քրեական գործերից 5-ը ընթացքի մեջ են, 1-ը կարճվել է՝ իրավախախտի մահվան հիմքով: Վերջին դեպքով նախատեսվող գործողությունները դեռևս պլանավորման փուլում են:

Դեպքերից երկուսի ընթացքի վերաբերյալ տեղեկություն հայտնի չէ, քանի որ դրանց տուժողներին իրավական աջակցություն են տրամադրել այլ կազմակերպությունների

[1] Փինք Արմենիան ԼԳԲՏ-ն օգտագործում է որպես ներառական եզր բոլոր ինքնությունների համար

փաստաբաններ:

Նոյեմբեր ամսին նախատեսվող միջազգային «ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորումը», որը նախատեսվում էր անցկացնել Հայաստանում, չկայացավ: Ոստիկանությունը, տուրք տալով հոմոֆոբ խմբերի կողմից ֆորումի անցկացման և դրա մասնակիցների դեմ պարբերաբար իրականացվող բողոքի միջոցառումներին, հայտարարեց, որ նպատակահարմար չի գտնում նման միջոցառման անցկացումը և, որ չի կարող վստահեցնել, որ ոստիկանությունը կարող է ապահովել անվտանգություն:[2]

2018թ.-ի փետրվարի 21-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կոմունիկացվել է Փինք Արմենիայի համար ռազմավարական նշանակություն ունեցող Մինասյանն ընդդեմ Հայաստանի գործը, որը վերաբերում է 2014թ. «Իրավունք» թերթում հրապարակված «Նրանք սպասարկում են միջազգային համասեռամոլ լոբբինգի շահերը» հոդվածին, որում ներկայացված էր անձանց սև ցուցակ, ում նկատմամբ հեղինակը հորդորում է խտրականություն դրսևորել՝ նրանց հասցեին հնչեցնելով վիրավորական արտահայտություններ: Այս գործով Եվրոպական դատարանի վճիռը կլինի նախադեպային Հայաստանի համար, քանի որ առաջին անգամ ՀՀ կառավարությունը ստիպված կլինի ուղղակիորեն անդրադառնալ ԼԳԲՏ անձանց խնդրին և հիմնավորել վերջիններիս համար խտրականությունից զերծ միջավայրի ապահովման ուղղությամբ ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական դաշտում արդյունավետ միջոցների բացակայությունը: Բացի այդ գործն ունի նաև կարևոր նշանակություն իրավունքի զարգացման տեսանկյունից, քանի որ կքննարկվի խոսքի ազատության չարաշահման հարցը, դրա արգելքի սահմանները: Գործի վերաբերյալ առավել մանրամասն կներկայացվի Փինք Արմենիայի կողմից վարվող ռազմավարական դատավարությունների մասին պատմող Հավելված 1-ում:

Ակնհայտ անհիմն և չպատճառաբանված որոշումներով Վարչական դատարանում մեկ տարուց ավել քննության ենթարկվելուց հետո կարճվել է Երևանի քաղաքապետարանի դեմ Փինքի ներկայացրած հայցի հիման վրա քննվող գործը՝ պատճառաբանելով, որ այն ենթակա չէ դատարանում քննության, իսկ Մշակույթի նախարարության դեմ քննվող գործով դատարանը որոշում է կայացրել հայցը մերժելու վերաբերյալ: Որոշումները բողոքարկվել են վերաքննության կարգով: Այս մասին ևս առավել մանրամասն կներկայացվի Հավելված 1-ում:

[2] https://www.tert.am/am/news/2018/11/06/Osipyan/2837372

Պետության ստանձնած պարտավորությունները

Մարդու իրավունքների և ազատությունների անխոչընդոտ իրացման և յուրաքանչյուրի համար երկրում ապահով, հավասար միջավայր ստեղծելու համար պետությունը ստանձնել է որոշակի պարտավորություններ:

Այդ պարտավորությունների ձախողումը ուղղակի կամ անուղղակի կերպով հանգեցնում է մարդու իրավունքների խախտման:

Պետությունը նախ և առաջ պարտավոր է հարգել մարդու իրավունքները, ձեռնպահ մնալ դրանց իրացման նկատմամբ ոչ իրավաչափ միջամտություններից: Այս պարտավորությունը ներառում է նաև հարգանք այն ջանքերի նկատմամբ, որոնք անձը գործադրում է իր՝ մարդու իրավունքների իրականացման նպատակով: Պետությունը չպետք է թույլ տա մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ ուղղակի կամ անուղղակի այնպիսի միջամտություն, որը մարդու տվյալ իրավունքների թույլատրելի սահմանափակումների սահմաններից դուրս է:

Պետության հաջորդ պարտավորությունն է պաշտպանել մարդու իրավունքները, ինչը ենթադրում է պետության կողմից մարդուն ցանկացած այլ անձի կողմից դրսևորվող ոտնձգություններից պաշտպանելը: Այս պարտավորության շրջանակներում պետությունը պետք է արդյունավետ և գործուն իրավական պաշտպանության մեխանիզմների միջոցով իրականացնի իրավախախտման ցանկացած դեպքի քննություն, իրավախախտներին ենթարկի պատասխանատվության, իսկ իրավախախտումներից տուժածներին ապահովի պատշաճ փոխհատուցմամբ:

Ի վերջո պետությունը պարտավոր է ապահովել մարդու իրավունքների իրացման միջավայր: Սա նշանակում է, որ պետությունը պետք է կատարի օրենսդրական, վարչական, բյուջետային, դատական այնպիսի քայլեր, որոնք բավարար պայմաններ կստեղծեն մարդու իրավունքների լիարժեք իրականացման համար: Դրանով պետությունը կպարտավորվի ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի մշակույթ կձևավորի հասարակության շրջանում՝ երկրում ստեղծելով յուրաքանչյուրի համար հավասար և ապահով միջավայր:

Պետությունը մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու համար պայմաններ ապահովելու իր պարտականությունները կատարում է իր տարածքային իրավասության սահմաններում:

1. Կյանքի իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:

2. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:

3. Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

Հոդված 24, ՀՀ Սահմանադրություն [3]

Անձի կյանքի իրավունքի իրականացումն ապահովելու պետության պարտականությունը ոչ միայն ենթադրում է ուղղակիորեն չմիջամտել դրա իրականացմանը, այլև պաշտպանել մասնավոր անձանց կողմից ոտնձգություններից:[4] Այսինքն, պետության ուղղակի պատասխանատվության բացակայությունը անձի կյանքի իրավունքի միջամտության գործում չի բացառում վերջինիս պատասխանատվությունն իրավունքի խախտման հարցում:[5] Այնուամենայնիվ, կյանքի իրավունքը պետք է մեկնաբանվի այնպես, որ անհամաչափ ծանր բեռ չդրվի իշխանությունների վրա: Երրորդ անձանց կողմից ոտնձգությունների դեպքում կյանքի իրավունքի խախտում կարող է արձանագրվել այն դեպքում, երբ հաստատվի, որ պետությունը իմացել է կամ պարտավոր էր իմանալ տվյալ պահին երրորդ անձանց կողմից անձի կյանքին սպառնացող իրական և անմիջական վտանգի առկայության մասին և իր լիազորությունների շրջանակներում չի ձեռնարկել անհրաժեշտ ողջամիտ միջոցներ կանխելու անձի կյանքին սպառնացող այդ վտանգը:[6]

Հարձակումներ տրանսգենդեր անձանց վրա

Սեռական ծառայություններ տրամադրող տրանսգենդեր անձի զանգահարել է հաճախորդ՝ գումարի դիմաց սեռական հարաբերություն ունենալու նպատակով:

Այցելելով նրան՝ սեռական հարաբերություն է ունեցել, այնուհետև ցանկություն է հայտնել երկրորդ անգամ սեռական հարաբերություն ունենալ: Տրանսգենդեր անձը հայտնել է, որ երկրորդ անգամ սեռական հարաբերություն ունենալու համար նա պարտավոր է ավելացնել գումարը: Հաճախորդը ագրեսիվ է արձագանքել, թևով բռնել է նրա կոկորդից և սկսել խեղդել: Տրանսգենդեր անձը նրան գցել է հատակին, և ընկել նրա հետ: Հաճախորդը բարձրացել է նրա մեջքին, կրկին բռնել կոկորդից: Տուժողը դժվարությամբ հասել է տան դռանը, բացել այն և իր վրայից գցելով հաճախորդին դուրս եկել շքամուտք: Այնուհետև հաճախորդը կրկին հարձակվել է նրա վրա և նրանք միասին գլորվել են աստիճաններից: Հարթակի վրա տուժողը ընկել է դեմքով դեպի ներքև, հաճախորդը սկսել է հարվածներ հասցնել տուժողի գլխի հետևի շրջանում՝ հնչեցնելով հայհոյանքներ, ասելով. «մեռի»: Երբ տրանսգենդեր անձը գիտակցությունը կորցրել է, նա դադարեցրել է հարվածները:

Տրանսգենդեր անձը ուշքի է եկել հիվանդանոցում 3-4 օր անց և տեղեկացել, որ իր բնակարանն այրվել է:[7]

Հարուցվել է քրեական գործ, գտնվում է դատաքննության փուլում:

***

Անձն ընդունել է հաճախորդ, ում պետք է սեռական ծառայություն տրամադրեր

[3] Հոդված 24, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.
[4] Անգելովան և Իլիեվն ընդդեմ Բուլղարիայի թիվ 55523/00 ՄԻԵԴ վճիռ, § 93
[5] Եվրոպայի խորհրդի CM/Rec(2010)5 «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ» հանձնարարական
[6] Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 23452/94 ՄԻԵԴ վճիռ
[7] https://epress.am/?p=284027

գումարի դիմաց: Վերջինը մոտեցել է նրան և հետևից դանակով հարվածել կոկորդին: Դանակը մնացել է կոկորդի մեջ, նա ընկել է գետնին: Հանցագործը նստել է վրան, որպեսզի շնչահեղձ լինի: Տուժողը ձևացրել է, թե կորցրել է գիտակցությունը, հանցագործը հեռացել է: Այնուհետև տուժողը դուրս է եկել տանից, թակել հարևանի դուռը և խնդրել ընկերոջը կանչել: Հարևանները շտապ օգնություն են կանչել:[8]

Հարուցվել է քրեական գործ, սակայն կարճվել է, քանի որ իրավախախտը ինքնասպանություն է գործել:

Նշված դեպքերում իրավախախտի արտահայտությունները, հարվածների, վնասվածքների տեղակայումը ցույց են տալիս, որ տեղի է ունեցել սպանության փորձ՝ անձանց գենդերային ինքնության և/կամ զբաղմունքի հիմքով: Միևնույն ժամանակ գործի նախնական քննություն իրականացնող մարմինների կողմից դրանք որակվել են որպես ծեծ կամ առողջությանը վնաս պատճառելը: Բացի այդ, հաշվի չեն առնվել շարժառիթները, որոնցով պայմանավորված են եղել իրավախախտի գործողությունները:

Հայաստանի Հանրապետությունում տրանսգենդեր անձինք, ովքեր սեռական ծառայություններ են տրամադրում, տարիներ շարունակ ենթարկվել են բռնությունների, ինչի մասին բազմիցս բարձրաձայնել է Փինք Արմենիան՝ իր զեկույցներում և հրապարակումներում:

Նշյալ անձանց գենդերային ինքնության հիմքով հանցագործությունների դեպքերը չեն ստացել իրավապահ մարմինների կողմից պատշաճ արձագանք: Տուժողների խոցելի կարգավիճակը թույլ է տվել պետությանը անտեսել խնդիրը՝ փաստացի հրաժարվելով արդյունավետ քննություն իրականացնելուց:

Արդյունքում տրանսգենդեր անձանց նկատմամբ իրականացված հանցագործությունները մնացել են առանց քննության, իսկ հանցագործները՝ անպատիժ: Հետևաբար, նման իրավիճակում կարող ենք պնդել, որ պետությունը ձախողել է տրանսգենդեր անձանց իրավունքների պաշտպանության պարտավորությունն իրացնել:

Հարձակումն արդարացվել է տուժողի՝ նույնասեռական լինելու հանգամանքով

«Կոմայգուն» հարող տարածքում անձը մոտեցել է 15-ամյա երիտասարդի և դանակով երկու անգամ հարվածել նրան՝ սրտի և լյարդի շրջանում:[9] Լրատվամիջոցներով տեղեկություն է տարածվել, թե հանցագործը դիմել է այդ քայլին՝ կարծելով, թե տուժողը նույնասեռական է: Տուժողի մոր հայտնած տեղեկության համաձայն՝ հանցագործը երեխային հարվածել է, քանի որ վերջինս եղել է զինվորական համազգեստով, իսկ ինքը կրոնական որևէ կազմակերպության ներկայացուցիչ է, և դանակահարությունը կատարվել է որպես «զոհաբերություն Հիսուսին»: Մասնավորապես՝ ըստ տուժողի, հանցագործը հարվածելուց ասել է. «զինվորի արյուն Հիսուսի համար»:

---

[8] https://www.tert.am/am/news/2018/04/15/Trans/2663537
[9] http://www.armtimes.com/hy/article/134562

2. Խոշտանգումներից կամ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք

1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

2. Մարմնական պատիժներն արգելվում են:

3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

Հոդված 26 մաս 1, ՀՀ Սահմանադրություն [10]

Խոշտանգումը ցանկացած գործողություն է, որի միջոցով պետական պաշտոնատար անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմամբ եւ գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ, որեւէ անձի մտածված կերպով հասցվում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով: Այս բնորոշման մեջ չեն մտնում այն ցավն ու տառապանքը, որոնք ծագում են սոսկ օրինական սանկցիաների պատճառով, անբաժանելի են այդ սանկցիաներից կամ ծագել են դրանցից՝ պատահականորեն:[11]

Խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից ազատ լինելը անձի բացարձակ իրավունք է և ենթակա չէ սահմանափակման:[12] Որպեսզի դաժան վերաբերմունքն առաջացնի անձի վերոհիշյալ իրավունքի խախտում, անհրաժեշտ է, որպեսզի այն հասնի դաժանության նվազագույն մակարդակի, պետք է հաշվի առնվեն նաև կոնկրետ գործի հանգամանքները, ինչպես, օրինակ, վերաբերմունքի բնույթը, թե ինչ համատեքստում է այն տեղի ունեցել, դրա տևողությունը, ֆիզիկական և հոգեբանական հետևանքները, իսկ որոշ դեպքերում նաև՝ անձի տարիքը, սեռը և առողջական վիճակը:[13] Անհրաժեշտ է տարբերակել խոշտանգումը, անմարդկային վերաբերմունքը և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը, որտեղ խոշտանգումը անձին դիտավորությամբ պատճառված այն վնասն է, որը պատճառել է շատ լուրջ և դաժան տառապանք, մինչդեռ նվաստացնող վերաբերմունք կարող է համարվել այն վերաբերմունքը, որ անձի մոտ առաջացնում է վախի, վտանգի, ստորացված լինելու զգացողություններ,[14] իջեցնում է անձի հեղինակությունը և դերը, մարդկային արժանապատվությունը կամ ստիպում է անձին գործել իր կամքին կամ խղճին հակառակ:[15] Երբ անձին ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելը բավարար ծանրության չի հասել կամ չի հետապնդել խոշտանգման սահմանմամբ նախատեսված նպատակ, ապա խոսքը գնում է անմարդկային վերաբերմունքի մասին: Որոշ դեպքերում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը, սպառնալիքները, նույնպես նվաստացնող վերաբերմունք

---

[10] Հոդված 26, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.

[11] Հոդված 1, «Խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձեւերի դեմ» ՄԱԿ-ի 1984թ.կոնվենցիա

[12] Փրեթթին ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ թիվ 2346/02 վճիռ, §49

[13] Փրայսն ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ թիվ 33394/96 վճիռ, Կոստելլո-Ռոբերթսն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 13134/87 ՄԻԵԴ վճիռ, §30

[14] Այդինն ընդդեմ Թուրքիայի թիվ 23178/94 ՄԻԵԴ վճիռ

[15] Արևելյան աֆրիկյան ասիացիներն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ ՄԻԵԴ 4715/70, 4783/71 և 4827/71 գործերով

է համարվում:[16] Այս դեպքերում անհրաժեշտ չէ պետության կողմից դիտավորության առկայությունը անձի անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունքի խախտման փաստը ճանաչելու համար:[17]

Ոստիկանական մեքենայում բռնության են ենթարկել խաղաղ հավաքի մասնակցին

Նույնասեռական տղամարդը մասնակցելիս է եղել 2018թ.-ի ապրիլին տեղի ունեցող խաղաղ հավաքներին, երբ նրան ուժով նստեցրել են ոստիկանական մեքենան և բերման ենթարկել ոստիկանության բաժին: Մեքենայի մեջ ոստիկանության աշխատակիցները նրան ձեռնաշղթաներ են հագցրել, պառկեցրել են հատակին, նստել նրա վրա, ոտքերով և ձեռքերով հարվածել մարմնի տարբեր մասերին, հնչեցրել են սեռական բնույթի հայհոյանքներ և այլ վիրավորական արտահայտություններ՝ կապված իր սեռական կողմնորոշման հետ, մի քանի անգամ թքել են նրա վրա: Այս ամենը տեղի է ունեցել դեպի ոստիկանական բաժին ուղևորվելու ամբողջ ճանապարհի ընթացքում: Բաժին հասնելով՝ տուժողին քարշ են տվել աստիճաններն ի վեր:

Հարուցվել է քրեական գործ, ընթացքի մեջ է:

---

[16] Սմիթը և Գրեդին ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ թիվ 33985/96 և 33986/96 գործեր
[17] Փիրսն ընդդեմ Հունաստանի թիվ 28524/95 ՄԻԵԴ վճիռ, ինչպես նաև Խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձեւերի հարցերով ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողի U.N. Doc. No. A/56/156 2001թ. զեկույց փաստաթուղթ

3. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 31, ՀՀ Սահմանադրություն [18]

Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ օրենքի առջև իրավասուբյեկտության ճանաչման, ինչպես նաև գաղտնիության իրավունքը:[19] Այն ներառում է պետության պարտականությունը ճանաչելու անձի կողմից ընդունված իր սեռը և գենդերային ինքնությունը՝[20] որպես անձի կողմից անձնական կյանքի իրավունքի իրականացման ապահովում:

«Անձնական կյանքը» լայն հասկացություն է, ներառում է անձի ֆիզիկական և հոգեբանական ամբողջությունը: Որոշ դեպքերում այն ընդգրկում է նաև անձի ֆիզիկական և սոցիալական ինքնության ասպեկտները: Այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են, օրինակ, անձի գենդերային նույնականացումը, անունը, սեռական կողմնորոշումը և սեռական կյանքը, տեղավորվում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի պաշտպանության համատեքստում:[21] Անձի մարմինը իր անձնական կյանքի առավել ինտիմ բաղադրիչն է համարվում:[22]

Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը նաև նախատեսում է անձի ինքնազարգացման, այլ անձանց հետ կապերի հաստատման և զարգացման հնարավորության ապահովման իրավունքը, անձնական հարաբերությունների արդյունավետ իրացման, տվյալ հանրույթում ապահով միջավայր ունենալու իրավունքը:[23]

Անձանց սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված ֆիզիկական բռնությունների դեպքեր

2018թ.-ի մարտի 26 լույս 27-ի գիշերը տուժածն անցնելիս է եղել Մաշտոց-Գրիգոր Լուսավորիչ փողոցների գետնանցումով, երբ նրան մոտեցել են 2 անծանոթներ, առաջարկել են սեռական հարաբերություն ունենալ՝ իմանալով, որ հանդիսանում է տրանսգենդեր կին: Տուժողի հրաժարվելուց հետո նրանք քաշքշել են վերջինի հագուստից, մազերից և ձեռքերից՝ նրան պատճառելով ֆիզիկական ցավ, հայհոյանքներ են հնչեցրել նրա հասցեին, սպառնացել բռնի կերպով սեռական հարաբերություններ ունենալ և սպանել: Տուժողը սպառնացել է ոստիկանություն զանգահարել, ինչից հետո անծանոթները հեռացել են: Այդ ընթացքում տուժողի ընկերներից մեկը հեռախոսի միջոցով տեսանկարահանել է անծանոթներին:

[18] Հոդված 31, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.
[19] Հոդված 16, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ 1966թ. միջազգային դաշնագիր
[20] Տես [35] հոդվածներ16 և 17, ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն 16
[21] Տես [9]
[22] Y.F. ընդդեմ Թուրքիայի թիվ 24209/94 ՄԻԵԴ վճիռ
[23] Քոնոորսն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 66746/01 ՄԻԵԴ վճիռ

Հաղորդում է ներկայացվել ոստիկանության բաժին, կցվել է նաև տեսաձայնագրությունը: Օրեր անց տուժողը փողոցում կրկին հանդիպել է իրավախախտներին, ինչից հետո զանգահարել է իր ներկայացրած հաղորդման հիման վրա նյութեր նախապատրաստող հետաքննիչին: Իրավախախտները բերման են ենթարկվել: Տուժողը հրաժարվել է բողոքից:

***

Բիսեքսուալ տղամարդը մտել է դեղատուն և երբ դուրս է եկել, անծանոթը մոտեցել է նրան և մի քանի անգամ հարվածել նրա գլխին: Երբ նրա աչքերի առջև սևացել է և ընկել գետնին, հարձակում գործած անձը հեռացել է: Տուժողի պնդմամբ հարձակումը տեղի է ունեցել իր սեռական կողմնորոշման հիմքով, ինչը կարող էր ենթադրվել իր մազերից և հագուստից:

Հաղորդում է ներկայացվել ոստիկանության բաժին: Տուժողը բացատրություն է տվել: Իրականացվել է դեպքի վայրի զննություն, տեսախցիկներ չեն հայտնաբերվել: Տուժողը հրաժարվել է բողոքից՝ համարելով, որ անծանոթը չի հայտնաբերվի:

***

Տրանսգենդեր կնոջ հարևանը պարբերաբար սպառնում է նրա կյանքին և առողջությանը: Հարևանը, մասնավորապես, ասում է, որ կսպանի նրան. մեկ անգամ կնոջից զենք է ուզել՝ ասելով՝ «բեր՝ սրան գյուլլեմ» և այլն: Հարևանի սպառնալիքների հիմքում դիմողի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության նկատմամբ նրա խիստ բացասական վերաբերմունքն է, որը վերջինս արտահայտում է դիմողի հասցեին սեռական կողմնորոշման վերաբերյալ վիրավորական բառեր հնչեցնելով:

Հարևանը չի վճարում նաև նրանից գնված գույքի արժեքը, ինչպես նաև խոչընդոտում է ինչպես խմելու, այնպես էլ ոռոգման ջուր ստանալուն՝ անջատելով ջրատար խողովակը:

Մեկ անգամ, երբ տուժողը գտնվել է իր տան բակում, նրա և հարևանի միջև վիճաբանություն է սկսվել: Հարևանը կրկին հայհոյել և սպառնացել է նրան, ձեռքերով և ոտքերով անկանոն շարժումներ է արել, փորձել հարվածել: Երբ նա չի արձագանքել հայհոյանքներին, հարևանը ավելի է բարկացել: Տուժողը գնացել է տուն և կողպել դուռը ներսից: Հարևանը բակերն առանձնացնող պատի վրայով ցատկել է դեպի տուժողի բակ, շտապել նրա տան մոտ, հարվածներ հասցրել տան դռանը: Այդ ընթացքում տուժողը զանգել է ոստիկանություն: Հարուցվել էր քրեական գործ, ապա կարճվել:

***

2018թ.-ի ամռանը Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղում մի խումբ անձինք, որոնց մի մասը եղել են նույն գյուղից, մյուս մասը՝ Գորիս քաղաքից, հավաքվել են այն տան մոտ, որտեղ հանգստանալու էին գնացել 9 երիտասարդներ, այդ թվում՝ ԼԳԲՏ ակտիվիստներ: Տունը պատկանել է ԼԳԲՏ ակտիվիստներից մեկին: Տան շրջակայքում հավաքված անձինք նախ փորձել են կոնֆլիկտ հրահրել տան տիրոջ հետ, այնուհետև սեռական բնույթի հայհոյանքներ են հնչեցրել տանը հավաքվածների հասցեին, նրանց անվանել են «գոմիկ», պահանջել են լքել գյուղը: Երբ երիտասարդները դուրս են եկել տնից, նրանց շարունակել են հայհոյել, հարվածներ են հասցրել բռունցքներով, քարերով: Երիտասարդները սկսել են փախչել: Հանցավորները նրանց հետապնդել են փախուստի ամբողջ ճանապարհին, նրանց վրա քարեր նետել, ոտքով հարվածել են նրանց մարմնի տարբեր մասերին և տուժողների ճամպրուկներին: Նշված բռնության արդյունքում տուժածները ստացել են մարմնական տարբեր վնասվածքներ, մասնավորապես՝ տուժածներից մեկի գլուխը պատռվել է, մյուսի քիթն է վնասվել, մեկ այլ երիտասարդի ոտքը և կրծքավանդակը, մյուսների վրա առկա են

սալջարդեր, որոնք առաջացել են նրանց վրա նետված քարերից:

Երիտասարդները դիմել են ոստիկանություն: Հարուցվել է քրեական գործ՝ ծեծի հանցակազմով՝ հաշվի չառնելով իրավախախտների շարժառիթները:

Երևանի 2800 ամյակի առիթով ընդունված համաներման մասին օրենքի ուժով գործի քննություն իրականացնող քննիչը կարճել է գործի վարույթը: Որոշումը բողոքարկվել է առաջին ատյանի դատարան և բողոքը բավարարվել է: Գործի քննությունը շարունակվում է: Այնուամենայնիվ մի շարք հանցավորների նկատմամբ անգամ քրեական հետապնդում չի իրականացվել, որովհետև հանցակազմ չեն գտել:

***

Դիմողն իր ընկերների հետ նշելիս է եղել Հելոուինը (կերպարով լինելը պարզված չէ): Նրանք գտնվել են դրսում, երբ նրանց մոտեցել է մի երիտասարդ, ծխախոտ խնդրել, այնուհետև սկսել քաշքշել բաճկոնից և վերնաշորերից՝ ասելով՝ դու դրանցից ես, հա՞ (դիմողի խոսքերով երիտասարդը նկատի է ունեցել լեսբիներին, քանի որ դիմողը կարճ մազերով է): Քաշքշուքի արդյունքում դիմողը վայր է ընկել դեմքով դիպչելով կոտրված ապակիներին, ինչի արդյունքում մաշկը պատռվել է և սկսել է արնահոսել: Դրանից հետո երիտասարդը հեռացել է դիմողի կողքից:

Հաղորդում է ներկայացվել ոստիկանություն, սակայն տուժողը հետագայում հրաժարվել է բողոքից՝ մտահոգվելով, թե իր սեռական կողմնորոշման մասին տեղեկությունը կարող է տարածվել:

***

Մեկ այլ դեպքում ևս տուժողը սեռական ծառայություններ մատուցող անձ է: Հաճախորդը դանակով մի քանի անգամ հարվածել է նրան: Դեպքի ընթացքի վերաբերյալ տեղեկություն հայտնի չէ:

Ընտանեկան բռնության դեպքեր

Նույնասեռական տղամարդու քրոջ ամուսինը, ով բնակվում է իր հետ, պարբերաբար նրան ենթարկում է ծաղրի, վիրավորական, նվաստացուցիչ արտահայտություններ է հնչեցնում՝ կապված իր սեռական կողմնորոշման հետ: Նույն անձը պարբերաբար ֆիզիկական բռնության է ենթարկել իրեն: Վերջին դեպքում իրավախախտը տուժողին ցած է գցել աթոռից և սկսել հարվածել նրան: Տուժողը չի ցանկացել դիմել իրավապահ մարմիններին՝ իր քրոջը չվնասելու համար:

Փինք Արմենիայի փաստաբանը կապ է հաստատել իրավախախտի հետ, նախազգուշացրել վերջինին իր գործողությունների ոչ իրավաչափ բնույթի վերաբերյալ:

Փինք Արմենիայի սոցիալական աշխատողի միջամտությամբ խնդիրը հարթվել է:

***

Դիմողի հայրը, իմանալով, որ նա նույնասեռական է, սկսել է ձեռքերով հարվածել դիմողին: Այնուհետև հանել է գոտին և մի քանի անգամ հարվածել գոտիով:

Դիմողի հայրը գործադրել է նաև հոգեբանական բռնություն՝ պահանջելով այցելել հոգեբույժի և «բուժվել»:

Ներկայացվել է հաղորդում, սակայն հետագայում տուժողը բողոքը հետ է վերցրել, քանի որ իրավախախտն իր հայրն է:

***

Տուժողի հայրը և եղբայրը (անհայտ աղբյուրից) իմացել են տուժողի սեռական կողմնորոշման մասին, նրա նկատմամբ կիրառել են ֆիզիկական բռնություն, հարվածներ

են հասցրել ոտքերով և ձեռքերով նրա դեմքին, մարմնի տարբեր հատվածներին, ինչի արդյունքում տուժողը ստացել է մի շարք մարմնական վնասվածքներ, սալջարդեր, կոտրվել է քիթը: Բռնության ընթացքում հնչեցրել են սպառնալիքներ, որ կսպանեն նրան:

Հաղորդում է ներկայացվել, սակայն հետագայում տուժողը հրաժարվել է ընթացք տալ, քանի որ եղբայրը մահացու հիվանդ է եղել:

***

Անձի մայրը, իմանալով, որ իր դուստրը նույնասեռական է և զուգընկերուհի ունի, նրանից վերցրել է բջջային հեռախոսը, արգելելով տնից դուրս գալ:

Անձը չի ցանկացել դիմել իրավական պաշտպանության միջոցների:

***

Բիսեքսուալ տղամարդու եղբայրը և մայրը բռնություն են գործադրել իր նկատմամբ տանը, երբ նա դիրքորոշում է արտահայտել ի պաշտպանություն նույնասեռականների:

Տուժողը չի ցանկացել գանգատ ներկայացնել իրավապահ մարմիններին, քանի որ իրավախախտներն իր ընտանիքի անդամներն են եղել:

Անձնական կյանքին վերաբերվող տեղեկությունների տարածման կամ դրա սպառնալիքի դեպքեր

Բիսեքսուալ տղամարդու ծանոթը, ով իր հետ հանդիպել է երեկույթի ընթացքում, որոշ մանրամասներ է իմացել նրա սեռական կողմնորոշման մասին և գումարի դիմաց հայտնել է նրա եղբորը:

Տուժողը չի ցանկացել որևէ գանգատ ներկայացնել այդ անձի դեմ, համարելով, որ ոստիկանություն դիմելու դեպքում իր անձնական կյանքի վերաբերյալ տեղեկատվությունն ավելի լայն տարածում կունենա:

***

Իրավախախտը տուժողի հետ տեսազանգով զրույց է ունեցել ու ընթացքում ձայնագրել է այն, այնուհետև հրապարակել է «Յութուբ» կայքում՝ անձի սեռական կողմնորոշման վերաբերյալ վիրավորական վերնագրով:

Փինք Արմենիայի փաստաբանը կապ է հաստատել իրավախախտի հետ, տեղեկացրել, որ իր արարքը օրինաչափ չէ և տեսանյութը համացանցից չհեռացնելու դեպքում նա կդիմի իրավապահ մարմիններին: Իրավախախտը կարճ ժամանակ անց հեռացրել է տեսանյութը:

***

Իրավախախտը, ով աշխատում է որպես հոգեբույժ, զանգել է տուժողի հորը և հայտնել նրա սեռական կողմնորոշման մասին, ինչպես նաև բացահայտել՝ թե ով է տուժողի զուգընկերը: Նա պահանջել է տուժողին հետ պահել իր զուգընկերոջից, այլապես տուժողի սեռական կողմնորոշման մասին կհայտնի այլ անձանց՝ այդ թվում տուժողի ընտանիքի ծանոթներին, ծնողների կոլեգաներին:

***

Անհայտ անձը տեղեկանալով նույնասեռ տղամարդու սեռական կողմնորոշման մասին և ֆեյսբուքյան ֆեյք հաշվով այդ մասին հայտնել է նրա տարբեր ծանոթներին:

Անձը չի ցանկացել դիմել իրապահներին:

***

Տրանսգենդեր կնոջ հետ բնակվող նրա զուգընկերուհին գնացել է տրանսգենդեր կնոջ հոր տուն, նրա հորը և խորթ մորը հայտնել, որ դիմողը տրանսգենդեր կին է, նրա կանացի անունը, ինչպես նաև որ նա սեռական ծառայություններ է մատուցում: Երբ դիմողը գնացել է իր հոր տուն, խորթ մայրը փակել է տան դուռը, թույլ չի տվել՝ դիմողը ներս մտնի, ոստիկանություն է զանգահարել՝ իբր դիմողը ցանկանում է ապօրինի բնակարան ներխուժել: Նա նաև բարձրաձայնել է տուժողի անձնական կյանքի մասին տվյալները հարևանների և ոստիկանության աշխատակիցների մոտ:

Անձը հրաժարվել է իրավապահների օգնությանը դիմելուց:

***

Բիսեքսուալ տղամարդը ինտերնետային կայքի միջոցով ծանոթացել է անծանոթ անձի հետ, ասել է իր սեռական կողմնորոշման մասին, փոխանցել է իր հեռախոսահամարը, պայմանավորվել են հանդիպել: Անծանոթը սպառնացել է, որ եթե տուժածը իրեն պարբերաբար գումար չփոխանցի, ինքը տուժածի սեռական կողմնորոշման մասին կհայտնի նրա հարազատներին և բնակության վայրի տղաներին, ինչը տուժածի համար վատ հետևանքներ կունենա:

Ներկայացվել է հաղորդում, հարուցվել է քրեական գործ: Գործի քննությունն այս պահին կասեցված է:

***

Տրանսգենդեր կնոջ նախկին կինը «Կիսաբաց լուսամուտներ» թոք շոուի ժամանակ հայտնել է անձի գենդերային ինքնության մասին, նրա հասցեին վիրավորական արտահայտություններ հնչեցրել, ինչից հետո հաղորդման փորձագետներից մեկը ևս նրա հասցեին վիրավորական արտահայտություններ է հնչեցրել՝ կապված գենդերային ինքնության հետ: Հաղորդումը հեռարձակվել է:

Իրավախախտման զոհ դարձած անձը հրաժարվել է դիմել իրավապահների օգնությանը:

Անձն իր նույնասեռ սեռական կողմնորոշման պատճառով հաշվառվել է որպես հոգեկան առողջության խնդիր ունեցող

Նույնասեռական անձն այցելել է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Արտաշատի հաշվառման-քննական բաժանմունք՝ վարորդական վկայական ստանալու համար որակավորման քննությունները հանձնելու նպատակով:

ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Արտաշատի հաշվառման-քննական բաժանմունքում նրան բանավոր կերպով թույլ չեն տվել մասնակցել վարորդական իրավունքի որակավորման քննություններին՝ պատճառաբանելով, որ ինքը հաշվառված է հոգեբուժական հաստատությունում:

Պետք է նշել, որ նա հոգեբուժական բժշկական հաստատությունում հաշվառված է ՀՀ պաշտպանության նախարարի՝ «Զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը հաստատելու մասին» 2010 թ.-ի փետրվարի 26-ի N 175 հրամանի Հավելված 1-ի 1-ին սյունակի 8բ կետով սահմանված հիվանդության հիմքով, ինչն ախտորոշվել է անձին նույնասեռական լինելու պատճառով պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ազատելու համար:

Շուռնուխ գյուղում տեղի ունեցած դեպքի տուժողը ստացել է սպառնալիքներ պարունակող նամակներ

2018թ.-ի ամռանը Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղում տեղի ունեցած դեպքի տուժողներից մեկը պարբերաբար ստանում է կյանքի և առողջության վերաբերյալ սպառնալիքներ և վիրավորանքներ պարունակող անձնական հաղորդագրություններ ֆեյսբուքյան տարբեր օգտատերերից: Նրան, մասնավորապես, սպառնում են, որ իր վերադարձը գյուղ, նրա համար վատ հետևանքներ կունենա:

Հաղորդում է ներկայացվել ոստիկանություն, սակայն քրեական գործ չի հարուցվել, քանի որ տուժողը ստիպված է եղել հեռանալ երկրից:

«Ֆեյսբուք» սոցիալական կայքում անձն իր անձնական էջում տեղադրել է «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք»[24] (Փինք Արմենիա) ՀԿ-ի պաշտոնական էջում հրապարակված *«Դու ուզու՞մ ես, որ բոլորը երջանիկ լինեն: Ուրեմն մաղթիր մեզ երջանկություն:»* վերտառությամբ տեսանյութը (տեսանյութը վերաբերում է ԼԳԲՏ անձանց հանդեպ հանդուրժողականությանը): Տեսանյութի մեկնաբանություններում նշյալ անձը մեկ այլ օգտատիրոջ հետ քննարկել է տեսանյութը, ինչից հետո վերջինս տեղադրել է «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի ֆեյսբուքյան էջի հղումը: Ի պատասխան՝ 1-ին օգտատերը գրել է. «... Ո՞նց կարանք իրանց վառենք»:

Նույն օրը լիովին այլ օգտատեր նույն սոցիալական կայքում կատարել է հետևյալ գրառումը. «Գեյերին պտի վառել՝ ես ձեր պառոդը ստորացնեմ»:

Հաղորդում է ներկայացվել ոստիկանություն: Ոտիկանություն դիմում է ներկայացվել, սակայն դիմումին ընթացք չի տրվել:

Շուռնուխում տեղի ունեցած դեպքին սոցիալական ցանցերում հաջորդել է ատելություն, անհանդուրժողական և թշնամանք սերմանող խոսքի մի նոր ալիք: Ստորև ներկայացվում է նշյալ շրջանում ատելության խոսքի դրսևորումների օրինակները:



[24] ՀԿ-ի անունը փոխվել է 2019թ.-ին, ներկա դրությամբ՝ Փինք իրավապաշտպան ՀԿ

Lilit M-yan Arajarkum em xumb xumb tanel benzalcakayanner ev ayrel, hasarakakan vayreric u erexaneri achqeric heru....

6

Melanie Vardanyan Այ քեզ անամոթություն, այ քեզ սադրանք... Մարդ(մարդիկ) էլ իր այլասերվածությունը դրոշ դարձնի, տատիիս ասած՝ ամոթը կապի ճակատին ու թռնի հասարակության դեմքին: Հիմա ի՞նչ, նույնիսկ կարծիք չպիտի հայտնենք, հիմա ո՞վ է հասարակության կարծիքին բռնանում: Ամոթ է, ամոթ: Ձեր խայտառակ պահվածքով ավելի զզվելի եք Փինկ Արմենիա

11

Eliza Sima

Ay jhud gna israel entex qo iskakan hayreniqna! duk lezbi gomik jhudnerek duk hayi gen chunek! Cha u chi exel hayi aryan generum ayspisi sodom gomorakanner! Rad exeq mer hoxeric dzes hangist chenk talu! Duk chek karoxanalu mer paperi surb hoxe pxtseq!

Like · Reply · 9w

Mayis Vardanyan

սրանց ազգուտակով պիտի գյուլես

Like · Reply · 9w

Սոնա Խաչատրյան Պոռնիկ արվամոլներ, էտ որ ամոթներդ կորցրած բերաններդ մտցրած ուրիշ տղու բերանի մեջ համբուրվում եք մասսայական, չեք մտածում, որ սա Հայկի ու Բելի, իրական տղամարդկանցով ու նամուսով կանանց երկիր է , պոռնիկ հայորդիներ, արվամոլները չեն ճաշակելու երկրի արքայությունը ստեղ էլ պիտի բերաններդ ջարդեն

Like · Reply · 8m

8

ԱՐՑԱԽ 1992 2 месяца назад (изменено)

Ի՞նչի եք եդ բոզի լակոտներին բաց թողել, ի՞նչի չեք սատկացրել: Որտեղ դրանց նմաններին հանդիպեք, անմիջապես ոչնչացրեք:ԿԵՑՑԵՔ Շուռնուխցիներ, հալալա ձեր կերած հացը:

67 ОТВЕТИТЬ

Armen Beglaryan Շնածնական այլանդակ վարքին պետք է վերջ տրվի!!!!! Մենք թվով շատ չենք, որ մեզ թույլ տանք նման "շքեղություն"! Այս ամենի ետեւում լրբածնական սորոսյան ոհմակները է! Մահ նեխած նեռին!

Like · Reply · 9w

3

Վահրամ Մարգարյան ՇՈՒՌՆՈՒԽՑԻՆԵՐ ՁԱՆ ՀԱԼԱԼԱ ՁԵԶ

Like · Reply · 9w

3

4. Հավաքների ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք:

2. Բացօթյա տարածքներում կազմակերպվող հավաքներն օրենքով սահմանված դեպքերում անցկացվում են ողջամիտ ժամկետում ներկայացված իրազեկման հիման վրա: Ինքնաբուխ հավաքների իրականացման համար իրազեկում չի պահանջվում:

3. Օրենքով կարող են սահմանվել դատավորների, դատախազների, քննիչների, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների հավաքների ազատության իրավունքի իրականացման սահմանափակումներ:

4. Հավաքների ազատության իրականացման և պաշտպանության պայմաններն ու կարգը սահմանվում են օրենքով:

5. Հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 44, ՀՀ Սահմանադրություն [25]

Պետության պոզիտիվ պարտավորությունն է պաշտպանել խաղաղ հավաքները:[26] Այս պարտավորությունը ներառում է ցանկացած տեսակի խաղաղ հավաքի մասնակիցների պաշտպանությունը կողմնակի ոտնձգություններից: Այս պարտավորության շրջանակներում ոստիկանությունը, նախապես տեղեկանալով հավաքի անցկացման վայրի և ժամի մասին, պետք է միջոցներ ձեռնարկի ապահովելու համար հավաքի մասնակիցների անվտանգությունը՝ ներառյալ նույն պահին, նույն վայրում հակընդդեմ հավաք իրականացնողներից: Իրավակիրառ մարմինները պետք է լինեն բավականաչափ կրթված և կրեն այնպիսի մշակույթ, որ մարդու իրավունքների պաշտպանությունը ընկալեն որպես առաջնահերթություն:[27]

ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորում

2018թ-ի նոյեմբերին Հայաստանում նախատեսվում էր ԼԳԲՏ քրիստոնյաների միջազգային ֆորումի անցկացումը, որի կազմակերպչական հարցերով էր զբաղվում «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ-ն: Ֆորումին ընդառաջ բարձրացավ ապատեղեկատվության մանիպուլատիվ մի նոր ալիք, երբ հոմոֆոբ որոշ խմբավորումներ հայտարարեցին, թե հեղափոխությունից հետո նոր կառավարության աջակցությամբ Երևանում իրականացվելու է ԼԳԲՏ շքերթ:

Այս խմբերի կողմից կազմակերպվեցին և իրականացվեցին բողոքի ակցիաներ՝ ընդդեմ Հայաստանում նման միջոցառման անցկացման:[28] Բողոքի ակցիա էր կազմակերպվել նաև Հայ առաքելական եկեղեցու կողմից:[29] Այս բողոքի ակցիաները վերաճեցին «միասեռականության քարոզչությունն արգելող օրենքի ընդունման» պահանջով հավաքների:[30] Հավաքների հաջորդ գլխավոր պահանջը ՀՀ վարչապետի կողմից այս

[25] Հոդված 44, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.
[26] Plattform Ärzte fűr das Leben ընդդեմ Ավստրիայի թիվ 10126/82 ՄԻԵԴ վճիռ
[27] Mary O'Rawe, "Human Rights and Police Training in Transitional Societies"
[28] https://www.youtube.com/watch?v=ocsMucca8Kg
[29] https://www.youtube.com/watch?v=_imnD8R-Xt4
[30] https://www.tert.am/am/news/2018/11/06/LGBT/2837662

հարցի վերաբերյալ հստակ դիրքորոշում արտահայտելն էր:[31] Իրականացվեց նաև ստորագրահավաք:



Ի վերջո ոստիկանությունը ստիպված եղավ անդրադառնալ ԼԳԲՏ ֆորումի անցկացման համար ՀՀ ոստիկանության կողմից անվտանգությամբ միջոցների ձեռնարկման հնարավորությանը: ՀՀ ոստիկանապետ Վալերի Օսիպյանը, մասնավորապես, լրագրողների հետ ճեպազրույցի ընթացքում նշեց. «Հաշվի առնելով որոշակի ռիսկերը՝ նման ֆորում Հայաստանում չի անցկացվի: Այս պահին նպատակահար-

[31] https://www.youtube.com/watch?v=WmHjsd7ItAs

Ինչու է Պետությունը լռությամբ ընդունում ԼԳԲՏ-ն ու միասեռամոլությունը, որը քայքայում է մեր ազգային և ավանդական ՀԱՅ ընտանիքը ու վտանգում երկրի ապագան:

Այդ դեպքում ասում ենք ՈՉ օտար բարքերին, պահպանենք Ազգայինը, Սահմանադրականը, Ավանդականը:

մար ինքս չեմ գտնում՝ անվտանգության պայմաններից ելնելով: Բացատրական աշխատանքներ տարանք այս շրջանում, որպեսզի ՀՀ տարածքում տեղի չունենա: Տեսանք, թե հարևան պետությունում՝ Վրաստանում, ինչ տեղի ունեցավ: Եթե նմանատիպ միջոցառում լիներ, ոստիկանությունը բոլորի անվտանգությունը կապահովեր»:[32]

Այսպիսով պետությունը ձախողել է իր պարտավորությունների իրականացման գործում՝ ուղղակիորեն հրաժարվելով ապահովել հավաքի մասնակիցների անվտանգությունը, փոխարենը հորդորել է հավաքի կազմակերպիչներին Հայաստանում չիրականացնել նման միջոցառում:

ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանն անդրադարձավ ԼԳԲՏ ֆորումին

Ի տարբերություն նախորդ իշխանությունների, որոնք խուսափում էին հանրային որևէ մակարդակում անդրադառնալ ԼԳԲՏ անձանց խնդիրներին, 2018թ-ին՝ թավշյա հեղափոխությունից հետո, նոր կառավարությունը ստիպված եղավ հրապարակային դիրքորոշում արտահայտել այդ մասին: Հարցը, իհարկե, օրակարգ բերվեց նախորդ իշխանությունների կողմից՝ մանիպուլյատիվ նպատակներով՝ սին մեթոդներով վարկաբեկել նոր կառավարությանը:

Կառավարությունը խնդրին անդրադարձավ վարչապետի մակարդակով, ով Ազգային ժողովում ի պատասխան ԲՀԿ խմբակցության պատգամավոր Գևորգ Պետրոսյանի՝ ԼԳԲՏ ֆորումի մասին հարցին հանդես եկավ հակասական՝և՛ դրական, և՛ բացասական երանգներ ունեցող դիրքորոշմամբ:[33] Նիկոլ Փաշինյանը մասնավորապես նշեց. «Մենք ընդունո՞ւմ ենք, որ Հայաստանում կամ աշխարհի ցանկացած երկրում կան մարդիկ, որոնք ունեն ոչ ավանդական սեռական կողմնորոշում: Եթե ընդունում ենք՝ ի՞նչ ենք անում, ի՞նչ վերաբերմունք ենք ցուցաբերում: Սովետական միության ժամանակ, օրինակ, կար հստակ դիրքորոշում: եթե կային նման մարդիկ, նրանց կալանավորում էին, դրանից առաջ կախաղան էին հանում, գնդակահարում էին և այլն: Ես, անկեղծ ասեմ, մեր Կառավարության համար որքան քիչ այդ թեման շոշափվի, այնքան լավ, որովհետև դա գլխացավանք ա: Հիմա եկեք որոշենք. մենք Քրեական օրենսգրքում հոդվա՞ծ ենք ավելացնում, Հայաստանից հանո՞ւմ ենք նրանց դուրս, թե՞ ասում ենք՝ քարոզչություն մի տարեք ձեր համայնքը ընդլայնելու և ուրիշներին ներգրավելու համար»: Նա միևնույն ժամանակ նշեց, որ ցանկացած հասարակությունում կա ԼԳԲՏ անձանց տոկոս, ինչի հետ պետք է հաշվի նստել:

[32] http://hayastan24.com/hy/hasarakutyun/lgbt-forum-ci-anckacvelu-osipyan
[33] https://www.youtube.com/watch?v=JAMVEC2EuVo

5. Արտահայտման ազատություն

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Հոդված 42, ՀՀ Սահմանադրություն [34]

Խոսքի ազատությունը, որպես ժողովրդավարական հասարակության հիմնասյուներից մեկը, ներառում է արտահայտման գրեթե ցանկացած ձև ու բովանդակություն պարունակող խոսքը՝ ներառյալ անձի գենդերային ինքնությունն ազատորեն արտահայտելու իրավունքը, որն ընդգրկում է գաղափարներ, կարծիքներ և տեղեկատվություն անձի ինքնության վերաբերյալ:

Խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ և ենթակա է որոշակի սահմանափակումների:[35] Այն ներառում է գաղափարներ և կարծիքներ արտահայտելու ազատությունը, բայց միևնույն ժամանակ պարտականություն է սահմանում խուսափել անձի նկատմամբ այնպիսի արտահայտություններից, որոնք պարունակում են վիրավորանք այլ անձանց նկատմամբ, խախտում են նրանց իրավունքները:[36] Մասնավորապես, խոսքի ազատության իրավունքը չի ենթադրում ատելության խոսքի ազատություն:[37]

Փոխվարչապետ Տիգրան Ավինյանը ԼԳԲՏ անձանց նկատմամբ բռնությունների մասին

Անձանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով բռնություններին է անդրադարձել նաև փոխվարչապետ Տիգրան Ավինյանը, որը Շուռնուխում տեղի ունեցած դեպքից հետո՝ Ֆեյսբուքյան ասուլիսի ընթացքում հայտարարել է, որ ցանկացած տեսակի բռնություն անընդունելի է՝ հիշեցնելով, որ հեղափոխությունը ևս իրագործվեց խաղաղ ճանապարհով և եթե նման անլուծելի թվացող խնդիրը լուծվեց առանց բռնության, ապա յուրաքանչյուր խնդրի լուծման էլ հնարավոր է հասնել:[38]

ՀՀԿ խոսնակ Էդուարդ Շարմազանովի «Հենարան էյ էմ» լրատվական կայքին տված հարցազրույցը

«Մենք ՀՀ-ում պետք է օրենքով արգելենք համասեռամոլության քարոզը: Ինչպես ժամանակին Վազգեն Սարգսյանն է նշել, եթե նույնիսկ ամբողջ աշխարհն էլ դառնա համասեռամոլների և աղանդավորների քարոզիչ, ես երբեք չեմ կարող նման քարոզ իրականացնել: Ես էլ որպես նրա գործի շարունակող, ևս մեկ անգամ ասում եմ, որ չենք կարող անտարբեր մնալ այն անառողջ և վտանգավոր քարոզի հանդեպ, որը տեղի է ունենում: Իմ այս նախաձեռնությանը կմիանան նաև պատգամավորներ և ոչ միայն ՀՀԿ-ից: Ես ուզում եմ շեշտել, որ որևէ մեկի անձնական կյանքի մեջ չեմ ուզում մտնել, յուրաքանչյուրն ինքն է որոշում իր անձնական կյանքն ինչպես դասավորել, դա իր իրավունքն է, բայց ինձ համար անթույլատրելի է իմ երկրում

[34] Հոդված 42, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.
[35] ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն թիվ 34
[36] Էրբականն ընդդեմ Թուրքիայի թիվ 59405/00 ՄԻԵԴ վճիռ
[37] ՕՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն թիվ 11
[38] https://www.youtube.com/watch?v=KQi47fXBgUQ

նման համայնքի ներկայացուցիչների քարոզը: Եվ ես դեմ եմ դրան:»[39]

Էդուարդ Շարմազանովի ելույթը Ազգային ժողովում

Իր ելույթի ընթացքում քննադատելով նոր կառավարությանը ասել է. «Ազգային և քրիստոնեական արժեքներն ամրապնդելու փոխարեն ստացանք հարձակում Վեհարանի և Վեհափառի վրա, Շուռնուխում համասեռամոլության քարոզ»:[40]

ԲՀԿ պատգամավոր Գևորգ Պետրոսյանի՝ ատելություն և անհանդուրժողականություն սերմանող խոսք



Այս գրառման առթիվ Փինք Արմենիայի և Վանաձորի Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի կողմից առանձին-առանձին իրավապահ մարմիններին են ներկայացվել հաղորդումներ հանցագործության մասին: Փինք Արմենիայի կողմից ներկայացված հաղորդումը որևէ ընթացք չի ստացել:

Նշենք, որ ի տարբերություն սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով ատելություն, թշնամանք և անհանդուրժողականություն տարածելուն, կրոնական հայացքների հիմքով թշնամանք տարածելը պատժելի է ՀՀ քրեական օրենսգրքի ուժով:



[39] http://henaran.am/382667.html
[40] https://www.youtube.com/watch?v=Go2RLWcK5dM



Գևորգ Պետրոսյան
September 18 at 8:30 PM

ԵՐԿՐՈՒՄ ԲԱՆ Ա ՓՈԽՎԵԼ...

Նախկինում, երբ համասեռամոլության քարոզի ու տարածման դեմ գրառումներ էի կատարում, որևէ քննադատության չէի հանդիպում. ավելին՝ շատ շատերի սրտով էր...
Հիմա, երբ նույնն անում եմ, մեկը մեկի հետևից քարկոծում են ինձ...
Չեմ արձագանքում, քանի որ գիտեմ. ուզում են ամեն գնով հայհոյանք կորզել, որ նկարեն, տարածեն ու էթիկայի հանձնաժողով պահանջեն...
Էտ են դրանք...
Իրոք, որ «երկրում բան ա փոխվել»...

Sarafyan Hrant and 122 others
20 Comments 10 Shares



Գևորգ Պետրոսյան
October 8 at 8:58 AM

Սիրելի ժողովուրդ...
Հիմա մեր պետությանն ու պետականությանը սպառնացող ավելի մեծ խնդիրներ կան, քան կոռուպցիան և իշխանափոխությունն են...
Սեռաշեղվածությունն ու աղանդավորությունը «ձվադրում են» մեր քթի տակ, ամեն քայլափոխի...
Եկեք այստեղ մեկտեղենք մեր ուժերը...
Այդ երևույթներն արդեն թափանցում են դպրոց ու մյուս կրթօջախներ...
Հավատացեք՝ երկիր ենք կորցնում, իսկ մենք ընկել ենք միմյանց տեղին ու անտեղի քննադատելու ետևից...

283
37 Comments 19 Shares

Գևորգ Պետրոսյան
2 hrs

Որոշ շառլատաններ, պարապ նստած, սպասում են մի հրապարակման, որ իրենց «ուժը» ցուցադրեն...
Այո, ասել եմ և կրկնում եմ՝ պետք է ազատվել համասեռամոլներից, այո պետք է ազատվել այն աղանդավորներից, որոնք կրծկեր երեխային պատշգամբից ցած են նետում՝ պատճառաբանելով, թե իրենց հավատքն է դա պահանջել...
Ես գտնում եմ, որ այստեղ մեր ազգային անվտանգության խնդիրն է...
Ու թող վայրահաչողները չկարծեն, որ եթե չեմ արձագանքում իրենց վայնասունին, ուրեմն ասելիք չունեմ...
Ասելիք շատ ունեմ, կարգավիճակս է խանգարում՝ իրերն իրենց անուններով կոչելու համար...

Sarafyan Hrant, Astghik Petrosyan and 210 others
18 Comments 7 Shares

Ազգային Ժողովի ամբիոնից հնչած ելույթում Գևորգ Պետրոսյանն ասել է. «Մեզ համար ամենամեծ սպառնալիքը մեր ավանդական ընտանիքի հավանական խոյահարումն է: Ես խնդրում եմ, հորդորում եմ, որ մեր ուժերը համախմբենք և ամեն օրինական և թույլատրելի հնարավորն անենք մեր ավանդական ընտանիքների պահպանման համար: ...

Պատերազմող երկիր ենք, շատ հետաքրքիր է՝ արական սեռի երկու ներկայացուցչի ինչպիսի՞ շփումից պետք է գոյանա սերունդ, որն ապագայում ստանձնի սահմանների պաշտպանությունը: Ձեզ հայտնի՞ է այդպիսի միջոց: Ես, որքանով գիտեմ, այդպիսի միջոց չկա»:[41]

[41] https://www.youtube.com/watch?v=8jsczNasICo

Հայտարարությունում ասվում է. «Ելնելով այն իրողությունից, որ ազգային միջավայրը, արժեհամակարգը, բարոյական ընկալումները և նորմերը հանդիսանում են մեր ինքնությունը պայմանավորող հիմքերը,որ ազգային ավանդական ընտանիքի մոդելը հայ ազգի հարատևությունը երաշխավորող անսակարկելի արժեք է, որի հանդեպ ոտնձգությունը ազգային անվտանգության խնդիր է՝ անընդունելի ենք համարում համամարդկային արժեքների, մարդու իրավունքների և ազատությունների քողի տակ ազգային ինքնության հիմքերը խարխլող երևույթների ուղղակի կամ անուղղակի քարոզչությունը:

Չենք կարող անարձագանք թողնել վերջին շրջանում մեր իրականության մեջ հաճախ հանդիպող իրողությունները, որոնք անխուսափելիորեն բացասական ազդեցությունն են թողնելու հայ հասարակության վրա: Հարգելով ցանկացած անհատի իրավունքներն ու ազատությունները՝ այնուամենայնիվ կարծում ենք, որ մեր հասարակությանը խորթ արժեքների քարոզը հղի է անկանխատեսելի վտանգներով և կարող է դիտվել որպես սադրանք՝ ավանդական արժեքներն վրա հիմնված հասարակության նկատմամբ»:

Հաշվի առնելով վերոհիշյալը, կոչ է անում որևէ կերպ չաջակցել նոյեմբերի 15-18-ը կայանալիք ֆորումին, իսկ ՀՀ իրավապահ մարմիններին կոչ է անում, հատուկ զգոնություն ցուցաբերել նախատեսվող ֆորումի օրերին և չտրվելով սադրանքներին՝ կանխել անհանդուրժողականության և մարդու իրավունքների խախտման ցանկացած դրսևորում:

«Բոլոր կողմերին կոչ ենք անում ցուցաբերել խոհեմություն և գործել ի նպաստ հայ հասարակության և Հայաստանի շահերի»:[42]

Ատելության խոսք է համարվում «...արտահայտման այն բոլոր դրսևորումները, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ռասսայական ատելությունը, քսենոֆոբիան, հակասեմիտիզմը կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված ատելության այլ դրսևորումներ, ներառյալ, ագրեսիվ ազգայնականությամբ պայմանավորված անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների և այլ խմբերի նկատմամբ խտրականությունն ու թշնամանքը...».[43]

Ատելության խոսքի դրսևորումներին պետությունը պետք է տա պատշաճ արձագանք դրանց ծանրությանը համապատասխան: Նախ և առաջ ատելություն, թշնամանք, խտրականություն և բռնություն հրահրող խոսքը պետք է պատժելի լինի օրենքով:

Քաղաքական և կրոնական առաջնորդները պետք է ձեռնպահ մնան անհանդուրժող կոչեր կամ արտահայտություններ օգտագործելուց, որոնք կարող են հրահրել բռնություն, թշնամանք կամ խտրականություն: Նրանք նաև որոշիչ դեր ունեն անհանդուրժողականության, խտրական կարծրատիպերի և ատելության խոսքի դեպքերի դեմ խոսելու առումով.[44] Ներկայացված դեպքերը 2018թ-ի ընթացքում իշխանության մաս կազմող կուսակցությունների ներկայացուցիչների կողմից դրսևորված ատելության խոսքի օրինակներ են, որոնք որևէ արձագանք չեն ստացել իրավապահ մարմինների և իշխանության այլ ներկայացուցիչների կողմից:

Հետևաբար պետությունը ձախողել է ատելության խոսքը հասցեավորելը և դրա ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը ինչպես օրենսդրական, այնպես էլ՝ քաղաքականությունների մշակման հարթակում:

---

[42] http://www.panarmenian.net/arm/news/261754/

[43] Եվրոպայի խորհրդի Նախարարների Կոմիտեի, հանձնարարական թիվ R 97 «ատելության խոսքի» վերաբերյալ, ընդունված 30 հոկտեմբեր, 1997թ.

[44] Ռաբաթի գործողությունների պլան. https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/SeminarRabat/Rabat_draft_outcome.pdf

Վահե Եփրիկյան

«Սպիտակներ, հարցրեք Փաշինյան Նիկոլին՝ ոնց ա ինքը վերաբերվում ԼԳԲՏ համայնքի ու տարատեսակ սեկտանտների կողմից իրականացվող պրոպագանդային»:

Արա Զոհրաբյան, փաստաբանների պալատի նախագահ

«Աստվածաշունչը նույնասեռական կապերն անբնական պղծություն է համարում (Ղևտական 18:22-25, Ա Կորնթ. 6:9,10):

Պողոս առաքյալը մեղքի դրսևորման մյուս ձևերը (պոռնկությունը, կռապաշտությունը, գողությունը, հարբեցողությունը և այլնը) նույնպես անընդունելի է համարում:

Բնական հարց է ծագում, թե քրիստոնեությունն առաջինը, որպես պետական կրոն ընդունած մեր հասարակությունն ինչու է անհանդուրժող կեցվածք դրսևորում նույնասեռականության նկատմամբ: Պատասխանը պարզ է, հասարակությանն անհանգստացնում է նույնասեռականության քարոզը:

Մեղքի այս ձևը հենց դրանով է վտանգավոր: Եթե սպանություն գործողները սպանությունները, որպես բնական և ընդունելի երևույթ լինելու քարոզով հանդես գան, ապա սա ավելի վտանգավոր կլինի քան նույնասեռականության քարոզը:

Սպանություն, պոռնկություն, խարդախություն և այլ անընդունելի գործողություն իրականացնողները խուսափում են դրա քարոզից (հակառակը ծածուկ են անում), քանի որ գիտեն հասարակության բացասական վերաբերմունքը այդ երևույթների նկատմամբ:

Որպես քաղաքացի, կարծում եմ, որ եկեղեցու դիրքորոշումն այս երևույթի վերաբերյալ շատ պարզ է: Եկեղեցին ընդունում է նույնասեռական մարդուն, որպես բացարձակ արժեք, մարդուն, որը կարող է զղջալ և ետ կանգնել իր սխալ ուղուց: Եկեղեցին անհանդուրժող է նույնասեռականության մեղքի նկատմամբ: Հասարակությունն էլ է նույն վերաբերմունքն արտահայտում: Հիմնականում հասարակությունը ակտիվություն է ցուցաբերում միայն այն դեպքերում, երբ նույնասեռականների քարոզի հետ է առնչվում:

Ի դեպ, բժշկության մեջ «տոլերանտություն» եզրույթով (տերմինով) նկարագրում են օտարածին մարմնի նկատմամբ մարդու օրգանիզմի դիմադրելու անընդունակությունը: Լրիվ տոլերանտությունը նշանակում է մահ: Մյուս ոլորտներում տոլերանտությունը նշանակում է հանդուրժողականություն»:

Կարեն Սարդարյան, փաստաբանների պալատի խորհրդի անդամ, դասավանդում է Փաստաբանների դպրոցում

«Համասեռամոլությունը չարիք է: Ի տարբերություն բարոյականության դեմ ուղղված այլ չարիքների, համասեռամոլությունը շատ ավելի մեծ չարիք է, քանի որ ուղղված է ոչ միայն բարոյականության, այլ նաև բնության դեմ: Եթե բարոյական նորմերը առավելապես մարդկային, հասարակական ծագում ունեն և մասամբ փոփոխական են, բնական օրենքներն ունեն բացառապես աստվածային ծագում և դրանց խախտումը անմիջական մարտահրավեր է արարչին: Հիմա ուզում եմ հասկանամ մեր ազգը՝ հայ ազգը քիչ թշնամիներ ունի՞, որ ուզում եք Աստծո հետ էլ մեզ թշնամացնել»:

Մեր Հայրապետյանի տարածած գրառումը

«Հարկ է նշել, որ փաստաբանի կողմից նման արտահայտությունները մտահոգիչ են այն առումով, որ վերջինս կոչված է պաշտպանել մարդու շահերը՝ աջակցելով արդարադատության իրականացմանը: Նշյալ գրառումները, որոնք արված են ոչ միայն անհատ փաստաբանների, այլ նաև փաստաբանների պալատի նախագահի կողմից թույլ են տալիս եզրակացնել, որ խտրականության զոհ դարձած անձինք հաճախ հնարավորություն չունեն անգամ օրենքով իրենց տրված իրավական պաշտպանության միջոցներից օգտվելու համար դիմել փաստաբանի աջակցության»:

Երևանի Պետական Համալսարանի Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի ղեկավար Արթուր Ղազինյան

1in.am լրատվականին տված հարցազրույցում, խոսելով գլոբալիզացիայի մասին, ասել է. «Ես բավական լուռ հետևում էի, կարծելով, թե իշխանությունները կսթափվեն և կտան ադեկվատ գնահատական այս իրավիճակին: Կարծես ինչ-որ ֆորումներ ա նախատեսվում Հայաստանում, ես խնդրեմ, խնդրանք, պահանջ, հորդոր, ոնց ձևակերպենք չգիտեմ, անհապաղ կասեցնել այս գործընթացը և այդ սոդոմ գոմորը վերացնել Հայաստանի, Երևանի փողոցներից: Ես կարծում եմ, որ արևելյան Եվրոպայում և կենտրոնական Ասիայում շատ երկրներ կան, որոնք հաճույքով կընդունեն այդ ֆորումները, բայց դա Հայաստանը չի:»

Դասախոսների գրառումները Ֆեյսբուք սոցիալական ցանցում

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ Գարիկ Քեռյան

«Արձանագրենք, որ կա հասարակական լուրջ մտահոգություն՝ կապված աղանդավորների և համասեռամոլների նկատմամբ նոր իշխանությունների հանդուրժողական վերաբերմունքի հետ: Այս հարցի շուրջ ցանկացած քննարկում ավարտվելու է փոխադարձ վիրավորանքներով, փոքրամասնությունների իրավունքների մասին դատարկաբանություններով: Քանի որ սպառնալիք է ստեղծվել մեր ազգային ինքնության դեմ, անհրաժեշտ է կտրուկ և արագ հանգուցալուծում:

Առաջարկում եմ խորհրդարանին հատուկ օրենքով ամրագրել, որ սեռական կողմնորոշումը ու կրոնական պատկանելությունը ի ցույց դնել, քարոզել կամ հանրային քննարկման առարկա դարձնելը քրեորեն պատժելի արարք է: Արդյունքում լգտբ դրոշով քայլող ցուցարարի գլխին բամփում ենք և վերջ: Ով ինչով զբաղվում ա, ինչ դավանում ա, թող անի իր տան պատերի ներսում»:

Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոս Աշոտ Կիրակոսյան

«Սիրելի Ալբերտ իմ և քո երեխաների իրավունքն է ապրել մի երկրում, որտեղ սերը և հանդուրժողականությունը մարդկային հարաբերությունների հիմնաքարն են բայց հիարկե այդ ամենի մեջ չի մտնում քո ասած հիվանդ մարդկանց հանդուրժելը, հարգելը կամ սիրելը: Կան հիվանդությունների տեսակներ, որոնց դեպքում հիվանդներին վառում են, որպեսզի մնացած մարդիկ չվարակվեն: Սիրով քո ուսանողական ընկեր Աշոտ Կիրակոսյան:

Մարդու իրավագիտակցությունը, աշխարհընկալումն ու ներքին մշակույթը նշանակալի մասով ձևավորվում են ուսանողական շրջանում: Պետության պարտավորությունն է ապահովել այնպիսի կրթություն, որի արդյունքում երիտասարդների մեջ կսերմանվի հավասարության, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի մշակույթը: Երևանի պետական համալսարանում նման դասախոսական կազմի առկայությունը մարտահրավեր է Հայաստանի պետական անվտանգությանը, քանի որ հասարակության շրջանում որոշակի խմբերի հանդեպ ատելության սերմանումը ուղղակիորեն վտանգում է այն հասարակական հարաբերությունները, որոնք ընկած են ազգային անվտանգության հիմքում»:

6. Օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ քննարկումներ

Խտրականության դեմ օրենքը, որի նախագիծը վերտառված է «Իրավահավասարության մասին օրենք», դեռ գտնվում է Արդարադատության նախարարության լրամշակման փուլում: «Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիայի» և Արդարադատության նախարարության պայմանավորվածության համաձայն իրականացվել է հետազոտություն օրենքի նախագծում «հավասարության մարմնի» ձևավորման և գործունեության անկախ մոդելի ստեղծման հնարավորությունների վերաբերյալ:[45] Հետազոտության արդյունքում առաջարկվել է ՀՀ Սահմանադրության 122-րդ հոդվածը, որը թույլ է տալիս օրենքի ուժով ստեղծել հավասարության հարցերով անկախ մարմին՝ ներկայիս նախագծում տեղ գտած Մարդու իրավունքների պաշտպանին կից ստեղծվող մարմնի մոդելի փոխարեն: Քրեական օրենսգրքի փոփոխության նախագիծը 2017թ-ին «Իդրաֆթ» համակարգում քննարկվելուց հետո շարունակում է մնալ լրամշակման փուլում:

«Երեխաների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի փոփոխության նախագիծ

Աշնանը «Հանրապետական» և «Ծառուկյան դաշինք» խմբակցությունների պատգամավորների կողմից շրջանառության մեջ դրվեց «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու նախագիծ՝ հետևյալ բովանդակությամբ. «Երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացմանը սպառնացող տեղեկատվություն տարածելը կամ քարոզչությունն արգելվում է:

Սույն հոդվածի իմաստով՝

1) երեխաների ֆիզիկական, մտավոր եւ հոգեւոր լիարժեք զարգացմանը սպառնացող տեղեկատվություն տարածելը կամ քարոզչությունը այնպիսի տեղեկությունների տարածման գործընթաց է, այդ թվում՝ իրական փաստերի և տեղեկատվության խեղաթյուրման միջոցով, որի նպատակն է ազդեցություն գործել երեխաների ֆիզիկական, մտավոր կամ հոգևոր լիարժեք զարգացման վրա և որն ուղղված է երեխաների մոտ՝

ա. ոչ ավանդական սեռական հարաբերությունների գրավչության պատրանքի ստեղծմանը,

բ. ավանդական և ոչ ավանդական սեռական հարաբերությունների սոցիալական խեղված ընկալմանը,

գ. ոչ ավանդական սեռական հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվության հարկադրական մատուցմանը,

դ. ոչ ավանդական սեռական հարաբերությունների նկատմամբ հետաքրքրության առաջացմանը,

2) ավանդական սեռական հարաբերություն՝ մերձավոր ազգականներ չհամարվող չափահաս տղամարդու և չափահաս կնոջ միջև փոխադարձ համաձայնությամբ տեղի ունեցող սեռական հարաբերություն,

[45] Հետազոտություն ՀՀ-ում հավասարության հարցերով մարմնի լավագույն մոդելի վերաբերյալ https://bit.ly/2YtQbNF

3) ոչ ավանդական սեռական հարաբերություն՝ ավանդական սեռական հարաբերություն չհամարվող ցանկացած այլ սեռական հարաբերություն,

4) մերձավոր ազգականներ՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 11-րդ հոդվածում նշված մերձավոր ազգականներ, ինչպես նաև որդեգրողներ և որդեգրվածներ:»[46]

Այն խնդրահարույց է ոչ միայն իր բովանդակության՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին անհամապատասխանության առումով, քանի որ պարունակում է իրավական որոշակիության սկզբունքին չհամապատասխանող «ոչ ավանդական» եզրույթը, այլ նաև ստեղծում է իրական ռիսկեր պետության կողմից մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության և դրանց իրացման պատշաճ ապահովման նկատմամբ:

Ռուսաստանի Դաշնությունում, Ուկրաինայում և Մոլդովայի հանրապետությունում գործող նույնաբովանդակ օրենսդրական կարգավորումների համատեքստում քննարկելով այսպես կոչված «հոմոսեքսուալության պրոպագանդայի» արգելքը՝ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) անդրադարձել է դրանց՝ ժողովրդավարական սկզբունքներին և մարդու իրավունքներին համապատասխանության հարցին՝ դա համարելով արտահայտման ազատության և հավաքների ազատության սահմանափակում:[47] Վենետիկի հանձնաժողովը, անդրադառնալով քննարկվող իրավակարգավորման՝ հանրային բարոյականության պաշտպանությանն ուղղված լինելու մասին հիմնավորմանը, նշել է.

«... 53. Սեռական փոքրամասնությունների կողմից իրենց արտահայտման ազատության իրացումը կախված չէ հետերոսեքսուալ մեծամասնության դրական կամ բացասական վերաբերմունքից: Ինչպես քաղաքական քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի[48] 19-րդ հոդվածի ընդհանուր մեկնաբանությամբ Մարդու իրավունքների կոմիտեն նշել է.[49] «բարոյականության կոնցեպտը բխում է շատ սոցիալական, փիլիսոփայական և կրոնական ավանդույթներից», և ցանկացած սահմանափակում՝ ուղղված «բարոյականության պաշտպանությանը պետք է հիմնված լինի սկզբունքների վրա, որոնք չեն բխում միայն մի ավանդույթից»:

...

56. ... Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ հոմոսեքսուալության նկատմամբ նույնիսկ լայն բացասական հասարակական կարծիքը չի կարող ոչ արդարացնել գեյ և լեսբի անձանց մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի սահմանափակումը, ոչ էլ սահմանափակել նրանց ազատությունը հանրայնորեն արտահայտելու իրենց սեռական կողմնորոշումը և ջատագովելու հոմոսեքսուալության նկատմամբ դրական մտքերն ու խթանելու հանդուրժողականություն հոմոսեքսուալության նկատմամբ: Այս առումով Վենետիկի հանձնաժողովը վերահաստատում է, որ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն CM/Rec(2010)5 հանձնարարականով հայտնել է, որ ոչ մշակութային, ավանդական, ոչ կրոնական արժեքները, ոչ էլ «գերակշռող մշակույթի» կանոնները չեն կարող արդարացնել ատելության խոսքը կամ խտրականության որևէ դրսևորում՝ ներառյալ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով:[50]

Ռուսաստանի դաշնությունում գործող օրենքի կիրառման դեմ ներկայացված անհա-

---

[46] http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=50061
[47] https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2013)022-e
[48] http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18500
[49] https://www2.ohchr.org/english/bodies/hrc/docs/gc34.pdf
[50] Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի վերաբերյալ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805cf40a

տական դիմումների արդյունքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դրանցում գտել է մարդու իրավունքների մի շարք խախտումներ. Մասնավորապես, Բաևն ընդդեմ Ռուսաստանի գործով ՄԻԵԴ-ը գտել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ (Արտահայտման ազատություն) և 14-րդ (խտրականությունից զերծ լինելու իրավունք) հոդվածների խախտում,[51] Ալեկսեևն ընդդեմ Ռուսաստանի գործով՝ 11-րդ (հավաքների ազատություն), 13-րդ (իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք), 14-րդ (խտրականությունից զերծ լինելու իրավունք) հոդվածների խախտում:[52]

Նման դիրքորոշում է արտահայտել նաև ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեն՝ Ֆեդոտովան ընդդեմ Ռուսաստանի գործի շրջանակներում, որը վերաբերում է Ռուսաստանի Դաշնության Ռայզան շրջանում նույնաբովանդակ օրենքի կիրառմանը դիմումատուի նկատմամբ:[53] Հետևաբար, սույն նախագծի հիմնավորումն առ այն, թե նպատակ ունի ամրապնդել և ընդլայնել հանրության բարոյականության պաշտպանության ապահովման՝ պետության պոզիտիվ սահմանադրական պարտականության իրավական-կառուցակարգային հիմքերը, որևէ իրավական հիմնավորում չունի, իսկ պետության պարտավորությունների իրականացման անհրաժեշտությունը պահանջում է ոչ թե մարդու հիմնարար իրավունքների ոտնահարման միջոցով օրենսդրական կարգավորումների նախատեսում, այլ ընդհակառակը: Կառավարությունը մերժեց ներկայացված նախագիծը՝ նման կարգավորման անհրաժեշտության բացակայության հիմքով:

Ընտանեկան օրենսգրքում փոփոխության նախագիծ

ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ, պատգամավոր Տիգրան Ուրիխանյանը ներկայացրել է ՀՀ Ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու նախագիծ, որով նախատեսվում էր ամուսնությունների կնքման արգելք հանդիսացող հանգամանքների շարքում ավելացնել նույն սեռի անձանց միջև ամուսնությունների կնքման արգելքը:

Կառավարությունը մերժեց ծրագիրը այն հիմնավորմամբ, որ ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածով և Ընտանեկան օրենսգրքի 10-րդ հոդվածով նախատեսված կարգավորումների համաձայն ամուսնությունը հնարավոր է միայն կնոջ և տղամարդու միջև:

ՀՀ Արդարադատության նախարարին մեղադրեցին ԼԳԲՏ անձանց «օրինականացնելու» մեջ.

Հեղափոխությունից հետո սոցիալական ցանցերում որոշ օգտատերերի կողմից շրջանառության մեջ դրվեց տեղեկություն, ըստ որի նորանշանակ նախարար Արտակ Զեյնալյանը նախաձեռնել է «օրինականացնել» նույնասեռականներին՝ իրականացնելով փոփոխություն ՀՀ քրեական օրենսգրքում: Հայտարարության նպատակն էր վարկաբեկել նոր կառավարությանը՝ վերջինին ներկայացնելով որպես «ապազգային»: Լուրը համացանցում բացասական արձագանք ստացավ և ի վերջո Արտակ Զեյնալյանը ստիպված եղավ արձագանքել, հայտարարելով հետևյալը. «Մտածում էի չարձագանքել անհիմն գրառումներին, բայց այս պարագայում չարձագանքելը որոշների մոտ իրենց սուտը առավել մեծ մասշտաբով տարածելու հնարավորություն է ընձեռում: Հարգելիներս, ես ոչ այս շաբաթ, ոչ նախորդ ամսին

[51] Բաևն ընդդեմ Ռուսաստանի թիվ 67667/09 ՄԻԵԴ վճիռ
[52] Ալեկսեևն ընդդեմ Ռուսաստանի թիվ 4916/07, 25924/08 և 14599/09 ՄԻԵԴ վճիռներ
[53] Ֆեդոտովան ընդդեմ Ռուսաստանի գործ թիվ 1932/2010

և ոչ էլ ընդհանրապես իմ նախարար նշանակվելուց հետո Քրեական օրենսգրքում փոփոխություն անելու որևէ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես չեմ եկել: Սոցիալական տիրույթում սկսված այս արշավն անհեթեթ ու անհիմն է»:[54] Մեկ օր անց, միայն, գրառման մեջ ավելացրել է. «Մեկնաբանություններում հայտնված բոլոր ոչ կոռեկտ, անպարկեշտ, խտրականություն և ատելություն պարունակող գրառումները կջնջվեն: Անչափ շնորհակալ եմ»:



Արտակ Զեյնալյանը, շտապելով «մաքրել» իր անունը, զլացավ որպես ՀՀ արդարադատության նախարար և նախկին իրավապաշտպան տեղեկացնել, որ նույնասեռականությունը ապաքրեականացվել է դեռևս 2003թ.-ին, և որ նմանատիպ տեղեկությունների տարածումը ոչ միայն պարունակում է վիրավորանք, այլ նաև անհանդուրժողականություն է սերմանում նույնասեռական անձանց հանդեպ:

[54] Արտակ Զեյնալյանի հայտարարությունը

Եզրակացություն

2018թ.-ին ԼԳԲՏ անձանց հանդեպ խտրականությունը ոչ միայն չի նվազել, այլ նաև նոր որակ է ստացել: Ատելության հիմքով հանցագործությունները շարունակել են մնալ առանց արդյունավետ և անաչառ քննության: Պետությունը ձախողել է անձանց իրենց սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված բռնություններից և մարդու իրավունքների հանդեպ այլ ոտնձգություններից պաշտպանելու իր պարտավորությունը: Ատելության հիմքով հանցագործություններին հաջորդել են դրանք արդարացնող, իրավախախտումներից տուժածներին մեղադրող արտահայտությունների տարափը՝ ինչպես սոցիալական ցանցերում՝ քաղաքացիների կողմից, այնպես էլ պետական մարմինների կողմից՝ լրատվամիջոցներին տրված հարցազրույցներում:

Ատելության խոսքն ավելի մեծ թափ է ստացել թավշյա հեղափոխությունից հետո, երբ նախկին իշխանության դեռևս որոշ պաշտոններ զբաղեցնող ներկայացուցիչները փորձել են նոր իշխանությունից ամեն կերպ պահանջել դիրքորոշում արտահայտել ԼԳԲՏ անձանց խնդիրների վերաբերյալ: Պաշտոնատար անձանց այսպիսի հայտարարությունները անարձագանք չեն մնացել, դրանց հիման վրա բանավեճեր, մամուլի ասուլիսներ, հարցազրույցներ են անցկացվել հայտնի և անհայտ հասարակական, քաղաքական գործիչների հետ, որոնք չեն զլացել շարունակել ատելություն և անհանդուրժողականություն սերմանող խոսքը՝ նոր կառավարությանը մեղադրելով «ապազգային», «հայ ավանդական ընտանիքը քանդող» կազմակերպություններին սատարելու մեջ:

Այս և ատելության խոսքի նմանատիպ այլ դրսևորումները չեն ստացել իրավական պատշաճ որակում և չեն արժանացել որևէ արձագանքի ոչ իրավակիրառ մարմինների, ոչ էլ կառավարության կողմից: Պատճառը մի կողմից օրենսդրական բացն է, որի առկայության պարագայում իրավակիրառ մարմինները դժվարանում են քրեաիրավական գործընթաց սկսել, մյուս կողմից հասարակության հոմոֆոբ մեծամասնության աչքում վարկաբեկվելու վախը:

Նոր կառավարությունը, չունենալով բավական փորձ և գիտելիքներ Հայաստանում ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ, չի ձեռնարկել միջոցներ այդ բացը լրացնելու ուղղությամբ:

Խտրականության դեմ օրենքի նախագիծը այդպես էլ չի ներկայացվել Ազգային ժողովի քննարկմանը, Քրեական օրենսգրքի փոփոխությունները գտնվում են լրամշակման փուլում: Այս նախագծերը դեռևս գտնվում են կառավարությունում:

Առաջարկություններ

Պետական մարմիններին և քաղաքական ուժերին՝

- Համագործակցել իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հետ՝ ստանալու համար առավել մանրակրկիտ տեղեկություն ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ոտնահարումների համակարգային բնույթ կրող ասպեկտների մասին և մշակել քաղաքականություն հանրային կյանքի տարբեր ոլորտներում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունն ու բռնությունը կանխելու ուղղությամբ:
- Չխուսափել ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ոտնահարումներին հանրային անդրադարձ կատարելուց:
- Ձեռնարկել համապատասխան միջոցներ պետական մարմինների ներկայացուցիչների կողմից ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքը կանխելու, իսկ տեղի ունեցած դեպքերում՝ այդ անձանց պատասխանատվության ենթարկելու առիթով:
- Ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնել ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների առիթով՝ բացառելով քննություն իրականացնող մարմիններում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական, կանխակալ վերաբերմունքը:
- Ընդունել խտրականությունը կանխարգելող, ինչպես նաև արգելող՝ քաղաքացիական, վարչական և քրեական պատասխանատվություն սահմանող առանձին համապարփակ օրենսդրություն, որը կապահովի խտրականությունից պաշտպանված լինելու անձի իրավունքը նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով:
- Վերանայել ատելության խոսքն արգելող ՀՀ օրենսդրությունը, սահմանել «ատելության խոսք» հասկացությունը, պատասխանատվություն սահմանել որոշակի հատկանիշներով օժտված անձանց, ներառյալ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքի արգելքը:
- Վերանայել ատելության հիմքով հանցագործություններն արգելող ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես նախատեսել անձի նկատմամբ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունը՝ որպես քրեական պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:
- Մշակել և կիրառել մեխանիզմներ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունների ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննության ապահովման համար, ներառյալ հանցագործության շարժառիթի բացահայտմանն ուղղված համապատասխան իրավական և ընթացակարգային մեխանիզմների մշակումը:
- Խրախուսել ատելության հիմքով հանցագործություններից տուժած անձանց, ինչպես նաև ականատեսներին հաղորդել կատարված հանցագործությունների վերաբերյալ տվյալներ:
- Փաստագրել և վարել ՀՀ-ում ատելության հիմքով հանցագործությունների, ներառյալ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունների վիճակագրություն՝ տեսանելի դարձնելով ատելության հիմքով հանցագործությունների խնդիրը ՀՀ-ում:

- Ապահովել արդարադատության մատչելիությունը ատելության հիմքով հանցագործություններից տուժած անձանց համար, մասնավորապես նախատեսելով անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ, որոնք կբացառեն անձի կրկնազոհացման վտանգը, կապահովեն անձի անվտանգությունը և կնախատեսեն վնասների հատուցման համընդգրկուն մեխանիզմներ:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարներ պետական մարմինների ծառայողների, մասնավորապես ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, ՀՀ Կառավարության ներկայացուցիչների և պաշտոնատար այլ անձանց շրջանում:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարները հասարակությունում, մասնավորապես հրապարակայնորեն հանդես գալ հանդուրժողականություն սերմանող հայտարարություններով՝ ճանաչելով ԼԳԲՏ անձանց հասարակության լիիրավ անդամներ և քաղաքացիներ լինելու փաստը:
- Կազմակերպել և իրականացնել դասընթացներ իրավակիրառ մարմինների հետ՝ ատելության հիմքով հանցագործություններից տուժածների և վկաների հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:

Զանգվածային լրատվության միջոցներին՝

- Դադարեցնել ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն և անհանդուրժողականություն սերմանող հրապարակումները՝ հասարակությանը մատուցելով գրագետ, էթիկապես ընդունելի և ԼԳԲՏ մարդու իրավունքների նկատմամբ հարգանք սերմանող նյութեր:
- Չշահարկել ԼԳԲՏ անձանց առնչվող ցանկացած թեմա՝ զերծ մնալով հասարակության մեջ անհարկի անհանդուրժողականություն և ատելություն սերմանելուց:
- Միջոցներ ձեռնարկել խմբագրություններում, որպեսզի ատելության խոսքեր ու կոչեր տարածող լրագրողները դադարեցնեն նման վարքը:
- Դադարեցնել միակողմանի հրապարակումները՝ միայն ԼԳԲՏ անձանց դեմ պայքարող խմբերին խոսք տալը:

Միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին՝

- Պատշաճ կերպով վերահսկել Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած ԼԳԲՏ անձանց իրավունքների վերաբերյալ միջազգային պարտավորությունների կատարման գործընթացը:
- Հանդես գալ պաշտոնական հայտարարություններով՝ ի աջակցումն ՀՀ-ում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության կարևորության և առաջնայնության:
- Մարդու իրավունքներին առնչվող իրենց զեկույցներում անդրադառնալ սույն զեկույցում բարձրացված ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների ձևավորված պրակտիկային:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին՝

- Բարձրացնել հասարակության տեղեկացվածության մակարդակը ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության, և դրանից բխող բացասական հետևանքների մասին, խտրականության բացառման կարևորության և հավասարության սկզբունքների վերաբերյալ:
- Բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը ատելության խոսքի և դրա քարոզչության հակաօրինականության մասին:
- Իրականացնել ջատագովություն հավասարության մասին արդյունավետ օրենք մշակելու և ընդունելու, ինչպես նաև այլ իրավական փաստաթղթերում ԼԳԲՏ անձանց համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ սահմանելու համար:
- ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ոտնահարումների հայտնի դեպքերում հանդես գալ հրապարակային դատապարտող հայտարարությամբ, պատշաճ արձագանքել ահազանգերին:

Հավելված 1

Ռազմավարական դատավարություններ

Փինք Արմենիան 2012 թվականից ի վեր վարել է ռազմավարական դատավարություններ,[55] որոնց նպատակն է հասնել փոփոխությունների ինչպես օրենսդրական դաշտում, այնպես էլ հանրային քաղաքականության մեջ: 2018թ.-ին ռազմավարական դատավարություններից երեքի քննությունը ունեցել է որոշակի զարգացում: Դրանցից երկուսը գտնվում են ներպետական դատական ատյանների վարույթում և վերաբերում են Փինք Արմենիայի կողմից 2017թ-ին հրապարակված սոցիալական գովազդների պաստառների շուրջ ծագած վեճերին՝ հետևյալ փաստերով՝

Փինք Արմենիան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի

Փինք Արմենիայի և Նուշիկյան ասոցիացիայի միջև կնքված պայմանագրի հիման վրա 25.05.2017թ-ին վերջինին պատկանող վահանակների վրա տեղադրվել էին սոցիալական գովազդ հանդիսացող պաստառներ: Պաստառներից մեկում պատկերված է երկու նույնասեռական տղամարդ կերպարանավորող անձանց գրկախառնություն, որտեղ գրված է. «Դու ուզու՞մ ես, որ բոլորը երջանիկ լինեն, ուրեմն մաղթիր մեզ երջանկություն»: Մյուս պաստառը տարբեր մասնագիտություններ ունեցող մարդկանց կոլաժ է ու գրված է. «Դուք հանդիպում եք նրանց ամեն օր»: Եվ երրորդում պատկերված են երեք ձեռքեր, իսկ պաստառին գրված է. «Տրանս անձինք մեր հասարակության մասն են»: 27.05.2017թ. գովազդային պաստառները ապամոնտաժվել, պատռվել և նետվել են աղբարկղը՝ առանց կազմակերպությանը տեղյակ պահելու:[56] Պաստառների հեռացումից մի քանի ժամ անց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության պետ Արազ Բաղդասարյանը իր ֆեյսբուքյան էջում տեղադրել է հետևյալ գրառումը. «Մայրաքաղաքում ապօրինի տեղադրվել է 3 գովազդային պաստառ, որոնք հանդուրժողականություն են քարոզում սեռական տարբեր կողմնորոշում

[55] http://www.pinkarmenia.org/strategiclitigation/
[56] https://bit.ly/2HdMOnX

ունեցող մարդկանց նկատմամբ... անկախ գովազդի բովանդակությունից այդ պաստառներն այժմ ապամոնտաժվել են, քանի որ Երևանի քաղաքապետարանը դրանց տեղադրման համար թույլտվություն չի տրամադրել»:

Փինք Արմենիայի կողմից վարչական դատարան է ներկայացվել հայցադիմում՝ Երևանի քաղաքապետարանի՝ գովազդային վահանակների՝ թվով երեք պաստառները հեռացնելուն ուղղված գործողությունները խոսքի ազատության, խտրականությունից զերծ մնալու իրավունքներին միջամտող, ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով:

Գործի դատաքննության ավարտից հետո Վարչական դատարանը որոշում է կայացրել գործի վարույթը կարճելու մասին՝ գործը դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով: Որոշումը բողոքարկվել է վերաքննիչ դատարան:

Փինք Արմենիան ընդդեմ Մշակույթի նախարարության

2017թ-ին վերոնշյալ գովազդային պաստառները ներկայացվել են ՀՀ Մշակույթի նախարարությանը՝ սոցիալական գովազդ ճանաչելու պահանջով: Պաստառների ճանաչումը որպես սոցիալական գովազդ, հնարավորություն կտար օգտվել սոցիալական գովազդի համար նախատեսված հնարավորություններից, այն է՝ դրանց անվճար տեղադրումը գովազդային վահանակների վրա, դրանց համար պարբերաբար տրամադրվող վահանակներից օգտվելու հնարավորությունը և այլն:

Մշակույթի նախարարությունը մերժել է Փինք Արմենիայի դիմումը՝ հիմնավորմամբ, որ ներկայացված գովազդները որևէ հանրային կարևորության խնդրի չեն անդրադառնում և սոցիալական իրազեկման տարր չեն պարունակում, բացի այդ, ժողովուրդը հեռուստահաղորդումներից ծանոթ է «ոչ ավանդական սեռական կողմնորոշում» ունեցող մարդկանց գոյության մասին, հետևաբար դրանց տ արածման անհրաժեշտությունը չկա:[57]

Փինք Արմենիայի կողմից ներկայացվել է հայցադիմում վարչական դատարան՝ ՀՀ մշակույթի նախարարության կողմից դիմումը մերժելու մասին վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչելու և նախարարությանը սոցիալական գովազդները սոցիալական ճանաչելու մասին որոշում կայացնելուն պարտավորեցնելու պահանջով:

Հայցադիմումը մերժվել է առաջին ատյանի վարչական դատարանի կողմից: Որոշումը բողոքարկվել է վերաքննիչ դատարան:

Մինասյանը և այլոք ընդդեմ Հայաստանի

2014թ. Իրավունք թերթը «Նրանք սպասարկում են միջազգային համասեռամոլ լոբբինգի շահերը. ազգի և պետության թշնամիների սև ցուցակը» հոդվածում հրապարակել էր Ֆեյսբուքի 60 օգտատերերի հղումները՝ կոչ անելով նրանց հանդեպ անհանդուրժող լինել, աշխատանքից հեռացնել կամ չընդունել, չշփվել նրանց հետ: Սև ցուցակը թերթը կազմել էր «Ազատություն» ռադիոկայանի ֆեյսբուքյան ասուլիսում երգչուհիներ Ինգա և Անուշ Արշակյաններին քննադատական հարցեր ուղղած անձանց հիման վրա: Մինչ այդ Անուշ Արշակյանը, լինելով Եվրատեսիլ մրցույթի միջազգային ժյուրիի Ավստրիայի ներկայացուցիչ, մրցույթի հաղթող, կանացի կերպարանքով, բայց մորուքով և նույնասեռական Կոնչիտա Վուրստի մասին «Առավոտ» թերթին տված հարցազրույցում ասել էր, որ զզվում է նրանից ու նրա հանդեպ այնպիսի հակակրանք ունի, ինչպիսին հոգեկան հիվանդների նկատմամբ ունի:[58]

[57] http://www.pinkarmenia.org/hy/2017/12/psa-conclusion/
[58] https://www.aravot.am/2014/05/14/460287/

«Իրավունք»-ի հոդվածում հայտնված անձանցից 16-ը դիմել էին դատարան: Սակայն, Հայաստանում բոլոր ատյաններում պարտվելուց հետո, այն պատճառաբանությամբ, որ թերթը օգտվել է իր խոսքի ազատության իրավունքից, հայցվորներից 14-ը 2015թ.-ին դիմել են ՄԻԵԴ:[59]

2018թ.-ին Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը կոմունիկացրել է Մինասյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործը՝ ՀՀ կառավարությանն ուղղելով հետևյալ հարցերը՝

1. Արդյո՞ք եղել է հայցվորների «մասնավոր ընտանեկան կյանքը հարգելու» իրավունքի խախտում՝ հակառակ Կոնվենցիայի 8-րդ հոդվածին:
2. Արդյո՞ք հայցվորները խտրականության զոհ են դարձել՝ հակառակ Կոնվենցիայի 14-րդ հոդվածին:
3. Արդյո՞ք այս դեպքում պետության գործողությունները կամ անգործությունը միտված են եղել Կոնվենցիայով նախատեսված իրավունքներից և ազատություններից որևէ մեկի վերացմանը կամ սահմանափակմանը՝ ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով՝ 17-րդ հոդվածի իմաստով:[60]

Նշենք, որ 17-րդ հոդվածի վերաբերյալ ՄԻԵԴ դիրքորոշումը կարևոր դերակատարություն կունենա ոչ միայն սույն գործի համար կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումների զարգացման տեսանկյունից, այլ նաև առհասարակ Եվրոպայում իրավունքի զարգացման առումով, քանի որ դրանով անդրադարձ է արվելու որպես արտահայտման ազատության սահմանափակում ատելության խոսքի արգելքի իրավաչափության սահմաններին:

[59] http://www.pinkarmenia.org/hy/strategiclitigation/caseof16/
[60] http://hudoc.echr.coe.int/eng?i=001-181716

Կազմակերպության մասին

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2007թ-ին: Կազմակերպությունն իր շահառուներին և հասարակությանն առավել հայտնի է որպես Փինք Արմենիա: Փինքը ԼԳԲՏ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) համայնքահեն կազմակերպություն է, ինչը նշանակում է, որ կազմակերպությունը ստեղծվել է ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների կողմից, ծառայում և աջակցում է համայնքի կարիքներին, ինչպես նաև խթանում է ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների պաշտպանության գործընթացը ու ջատագովում ԼԳԲՏ հարցերի շուրջ հանրային քաղաքականության փոփոխությանը:

«Փինք» իրավապաշտպան
հասարակական կազմակերպություն

www.pinkarmenia.org
info@pinkarmenia.org
+374 60 377277